ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

✉ ք. Վանաձոր, Հայքի Հրապարակ 1

☎ /0322/ 4-61-92
Fax /0322/ 2-07-70

թիվ _____

« _____» _____ 2021 թ.

«ԱՆՏԻՖԵՅՔ» ԿԱՅՔԻ ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳԻՐ
Ա. ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻՆ
Հասցեն՝ ՀՀ, ք. Երևան-0019, Բաղրամյան փողոց 1/27
էլ. փոստ՝ antifakeam@gmail.com

Ի պատասխան Ձեր 07.01.2021թ.-ի թիվ 013-21 գրությանը

Հարգելի տիկին Մաթևոսյան

2020 թվականին ՀՀ Լոռու մարզպետարանի աշխատակիցներին տրվել է 117953.4 հազ. դրամ (հարյուր տասնյոթ միլիոն իննհարյուր հիսուներեք հազար չորսհարյուր դրամ) պարգևատրում, որից.

ա/ «Քաղաքացիական, դատական և պետական ծառայողների պարգևատրում» հոդվածով հատկացված գումարներից՝ 37092.3 հազ. դրամ, այդ թվում՝ հունվարին՝ 18546.2 հազ. դրամ, հուլիսին՝ 18546.1 հազ. դրամ: Նշված պարգևատրումը քաղաքացիական ծառայողներին վճարվում է դեռևս 2002 թվականից՝ համաձայն կիսամյակային գնահատականների:

բ/ «Պարգևատրումներ, դրամական խրախուսումներ և հատուկ վճարներ» հոդվածով հատկացված գումարներից՝ 80861.1 հազ. դրամ: Պարգևատրման գումարները աշխատողներին վճարվել են ըստ ամիսների, չեն վճարվել մարտ և նոյեմբեր ամիսներին: Վերը նշված 80861.1 հազ. դրամ գումարից հոկտեմբեր ամսին հաշվարկված 10000.0 հազ. դրամը աշխատողների գրավոր համաձայնությամբ փոխանցվել է «Հայաստան» համահայկական հիմնադրամին:

Մարզպետի պարգևատրումները իրականացվում են գաղտնի ընթացակարգով և այն ենթակա չէ հրապարակման: Մարզպետը ներկայացնում է գույքի և եկամուտների տարեկան հայտարարագիր, ուստի նախկին մարզպետին վճարված պարգևատրման չափի վերաբերյալ տեղեկատվություն կարող եք ստանալ ներկայացվող հայտարարագրից: Համաձայն ՀՀ կառավարության թիվ 2064-Ա որոշման որպես մարզպետ աշխատում եմ 2020թ. դեկտեմբերի 17-ից և մարզպետարանից պարգևատրումներ չեմ ստացել:

1/19/2021

X

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՐՅԱՆ

Հարգանքով՝ Ա. ԽԱՉԱՏՐՅԱՆ

կատ. Ա. Բեջանյան
հեռ. /0322/ 4 34 99